

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ.



ՄԷՃՆ ՆԵՐՈՒՄ ԵՆ ՊԱՅԻ ՔԱՐԱՆՈՐ ՀԱՅՈՂ.

ՍՈՒՐԻՆ ՆԵՐՍԷՍ

Ուրախութեամբ կտեսնեմք որ ազգերնուս մեջ քա-
տրերգութեանց սերն սկսեր է արբննալ : Ասիկա
էռանդ մըն է որ շատ օգտաբեր կընայ ըլլալ մեր ժո-
ղովրդեանն ու մատենագրութեանը, իւր ըրած կըր-
կնակի մեծ օգուտներովը, որ է՝ ազգի մը բարբն ուղ-
ղել, ու փառքն յիշեցնել, նորոգել ու աւելցնել :

Քատրերգական ազգային եւ ազգաշահ ընկերու-
քիւն մը հաստատուեցաւ արդ ի Պոլիս : Պատուական
օրագիր մը (*Մուսայի Մասեայ*) շաբաթ շաբաթ իւր քա-
տրասեր ընրերգողները զուարճացնել ու հրահանգել
կաշխատի : Քաջուշիմ երիտասարդներ Պ. Մկրտիչ Պե-
շիկընդեան, Պ. Սրապիոն Հերիմեան, Պ. Ճիզմեհեան եւ
այլք, կաշխատին քէ տեսարաններով եւ քէ տպագրու-
թեամբ ազգերնուս այս պակասութիւնը լեցունել իրենց
յօրինած կամ յարմարեցած քատրերգութիւններովը :

Այս օրերս Փարիզ տպուած նոր ողբերգութիւն մ'ալ
տեսանք Ս. ՆԵՐՍԷՍ անուանով, որուն հեղինակն է
Զմիւռնացի Պ. Ս. Ս. Մարգար Վանանդեցի, որ Հայաս-
տանի *Bourgeois* գովելի ջանքով մը փափագեր է
փառաւորել, անշուշտ ցուցնել ուղեով՝ քէ ինչպէս
որ այն անգուգական բարերարին բարեգործութիւնքն
ու արդիւնքը մեծ էն ու անմահ՝ Հայաստանի վրայ,

մեծ է նաեւ Հայաստանեայց առ. նա զգացած երախ-
տագիտութիւնն ու սերը :

Դովելի ջանք ու դիտաւորութիւն, զոր որպէս մեր՝
նոյնպէս նաեւ ամենայն ազգասերք պէտք է ճանցնան
ու բաջալերեն, որպէս զի յարգոյ հեղինակը, ինչպէս
նաեւ միւս հանձարեղ սիրելի երիտասարդներն սիրտ
առնուն, խրախուսին իրենց խոստացած նոր ի նոր
երկասիրութիւններն եւս հետզհետէ հրատարակել ի
յորդոր նմանութեան այլոց, ու իրենց դեռակիրք գրիչ-
ներուն ալ ի զարգացումն եւ ի հաստատութիւն :

ՅԱՂԱԳՍ

ՄԱՐԴԿ ԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՑ

ԵՒ ՊԱՐՏՈՒՑ.

ՇԱՐԱԳՐԵԱՅ

ՍԱՐԳԻՍ Պ. ԹԵՌՊՈՐԵԱՆ

Երէ Քրիստոսի Տեառն մերոյ այս սրանգելի պա-
տուիրանք քէ « Զամենայն զոր միանգամ կամիջիք
քէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս եւ դուք արարէք
նոցա. » կարող ըլլային մարդիկ հասկանալ՝ երկնային
երջանկութիւնը երկրիս վրայ կրագաւորէր : Ամեն
օրենք, ամենայն պատուիրանք, ամենայն իրաւունք
այս սրանգելի հիման վրայ խարսխած են : Լաւ ճանց-